ծախսերի հետ կապված պահանջներ չի ներկայացվել, ուստի պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, ևս պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ընդդեմ Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ թիվ «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին 11.02.2026թ. թիվ 6

արձանագրությունը անվավեր ճանաչելու (վերացնել), թիվ «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ գնային առաջարկն հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված լինելու հիմքով մերժել պարտավորեցնելու պահանջների մասին **հայցը բավարարել.**

2. անվավեր ճանաչել «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2026 թվականի թիվ 6 արձանագրությամբ՝ «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

3. պարտավորեցնել թիվ «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ գնային առաջարկն հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված լինելու հիմքով:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEB3-667E-48B8-BA5A հսկիչ համարը կամ սքանավորելով QR

կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am